

Ազգ. Պատրիարքարանէ լուր կ'տրուի մեզ՝ թէ Երուսաղէմի Պատր. Փոխանորդ Տ. Գէորգ Եպսկ. Երէցեան Երուսաղէմ հրաւիրուած չէ, այլ պարզապէս պաշտօնանկ եղած է, և այս անօրինութիւնն ի պաշտօնէ հաղորդուած է Երուսաղէմէն Դատական նախարարութեան:

Տ. Գէորգ Եպսկ. Երէցեան երկու բողոքագիրներ զրկած է, մին Երուսաղէմի Ա. Պատրիարքին՝ իբրև նախագահի միաբանական ժողովոյ, և միւսը՝ Ա. Պատրիարք Զօր՝ իբրև նախագահի Ազգ. Կեդր. Վարչութեան, բացատրութիւն պահանջելով այն հարկեցողիչ պատճառներուն համար, որոնց վրայ հիմնուած է իր պաշտօնէն դադարման անօրինութիւնը:

Երուսաղէմի Ա. Պատրիարքն հեռազրաւ ծանուցած է Ա. Պատրիարք Զօր, թէ ժառանգաւորաց վարժարանի տեսուչ կարգուած է Տ. Գանիէլ Ծ. վարդ. Յակոբեան, ինչպէս երէկ դրեցինք, ժառանգաւորաց վարժարանի Տեսուչ Տ. Նղիշէ Ծ. վարդ. Զիլինկիբեան Երուսաղէմի Պօլսոյ Պատր. Փոխանորդի պաշտօնին կոչուած է:

### Վ Ա Ն Ա Յ Լ ՈՒՐ ԵՐ

Տեղւոյս նորահաստատ Կեդրոնականը վերջերս յաջողեցաւ արհեստանոց մըն ալ կցել իր կրթական գործին, ուր նոյն դպրոցի աշակերտները ուսման հետ պիտի սորվին նաև արհեստը, որ առ այժմ կը բաղկանայ միայն կերպասագործութենէ եւրոպական թելերով: Այս արհեստանոցին համար յատկացուած է նոյն դպրոցի վարի յարկը, ընդ վաւարտութեամբ և վերին հսկողութեամբ մասնադէտ Աւետիս էֆ. Կաթողիկոսեանի, որ մեր արհեստաւորաց մէջ բնածին տաղանդ մըն է իր հնարագիտական ընդունակութեամբ, այնպէս որ՝ նոյնիսկ պարսկական ցփսի գործելու ալ ձեռնարկած ըլլալով, վերջերս անոր համեմատ Եւրոպական գործիք մըն ալ բերել տուաւ, ինչպէս որ ամենայն ճարտարութեամբ և յաջողութեամբ կրնայ գործել ամենէն կնճռոտ կերպասներ իրենց նագոներով, և այս ամենը բոլորովին ինքնազարգացման ուժով ձեռք բերած ըլլալով՝ առանց վարպետի օգնութեան: Այս արհեստանոցին համար առայժմ

յատկացուած է 80 ոսկի, որմէ գոյացած շահը բաժնուած է հինգ մասերու վրայ: այս մասերէն երեք հինգերորդը յիշեալ վարպետին և մնացած երկու հինգերորդ գպրոցին պատկանելու պայմանու: Եթէ այս ձեռնարկին մէջ տեսնուելու բլլայ ակնկալուած յաջողութիւնը, ապագային ուրիշ արհեստներ ալ պիտի սկսին նոյն արհեստանոցին մէջ: Սրտագին յաջողութիւն կը մաղթենք:

Սալնապատու իգական որբանոցի շոգարարձութիւն զիմսձ է քարերարու հի Տիկին Նատիրեանցին, խնդրելով որ վութացնէ իր սովորական 60 ոսկեայ տարեկան նպաստը: Էջմիածնէն կը գրուի, թէ նոյն տիկինը ներկայիս մէջ ի վիճակի չէ նոյն նպաստը զրկելու, ինչպէս առ այժմ պիտի չկրնայ զրկել նաև տեղւոյս կեզրոնականին համար խոտացած 400 բուպլի նպաստը:

Սաոր համար այժմեան միացեալ շոգարարձութիւնը լուծեց վերոյիշեալ որբանոցի կրթական պաշտօնէութիւնը այն պայմանով, որ եթէ մինչև յառաջիկայ գպրոցական շրջանին ակնկալուած օգնութիւնները հասնելու բլլան, նորէն պիտի վերահաստատէ կրթական գործը: Իսկ եթէ ոչ, միայն նոյն սանուհիներուն կեանքի անհրաժեշտ պէտքերը պիտի հոգացուին առանց ուսմունք աւանդելու մինչև ց'նոր անօրինութիւն:

Աղթամարի ժառանգաւորաց վարժարանը, որ հանգուցեալ Կաթողիկոսի և նախկին տեղապահի օրերէն ի վեր աննշան և ապարդիւն վիճակ մ'ունեցած է, աշակերտաց թիւը 15—20 էն վեր չանցնելով, յառաջիկայ գպրոցական շրջանին կանոնաւոր գպրոցի մը հանգամանքը պիտի ստանայ աշակերտաց թիւն հեռոցեալ տեղեցուելով, նաև գպրոցը կզդիէն գուրս իոսխագրուելով: Առ այժմ Ախաւանից մէջ շինուելու վրայ է բնագարձակ ու երկյարկանի շէնք մը, որ պիտի բազկանայ դասարաններէ, լայնարձակ սալօնէ, ձաշարանէ և նշարանէ: Այս գպրոցն Բլլալով իբր Աղթամարի թեմին կեզրոնականը, հոն պիտի պատրաստուին քահանայացուներ և ուսուցիչներ նոյն թեմին համար: Արդեօք չարժէք, որ մեր կրթասէր բարերարներն հնչուն քաջալերութեամբ օգնութեան ձեռք կարկառեն այս ինքնայորդոր ձեռնարկին, զայն յորատութեան շաւղին մէջ դնելու համար, ի խրախոյս ծերունազարդ տեղապահին և միաբանութեան, նաև յօգուտ այն աղքատիկ թեմին հայ ուսանողութեան:

Նարեկայ վանահայր Դանիէլ ծ. վ. Ձատոյեան ատենէ ժ'ի վեր Աղթամար կանչուած ըլլալով տեղային պէտքերուն համար, անոր տեղ զըզուած էր նոյն վանուց նախկին վանահայր խիզանցի Յովհաննէս Վ. Յակոբեանը, բայց ոս վերջերս վախճանած ըլլալով, այժմ թափուր կ'մնայ նոյն վանքը վանահայրական պաշտօնէութենէ:

Վերջերս Աղթամարի կողմէն Մոկո գաւառի Կաթող. Տեղապահ կարգուեցաւ Վահրամ վարդ. Կանաչեան. կ'յուսացուի, որ սոյն երիտասարդ արեղան օգտակար պիտի ըլլայ նոյն տեղի ժողովրդեան համար թէ՛ կրօնական և թէ՛ կրթական տեսակէտով, մանաւանդ որ ինք ատեն մը Արմաշի մեջ ուսանելով, օգտուած է ըստ բաւականին, և ի հարկէ աւելի օգտուած պիտի ըլլար, եթէ հիւանդութեան մը պատճառաւ չստիպուէր հրաժարիլ տարաժամ:

ԵԹՈՎՊՈՅ ՀԱՅՈՅ ՀՈԳԵՒՈՐ ՀՈՎԻԻԸ

Եթովպիոյ հոգևոր հովիւ Տ. Մկրտիչ քահանայ Զլղատեան հետեւեալ մտերմական նամակն ուղղած է իր բարեկամներէն մէկուն, մանրամասնօրէն նկարագրելով Մենելիք Կայօեր կողմէ գտած համակիր ընդունելութիւնը:

«Շնորհիւ Բարձրելոյն և հոգածութեամբն ուղեկցիս, 13 օրէն ողջամբ հասայ Շուրա ըսուած վայրը, մերձ Ատիս—Ապապայի և հոն կանգ առի: Օրը կիրակի էր. մեր հոն ժամանման լուրը շուտով հասաւ ազգայիններուն ականջը, որոնցմէ ոմանք փութացած էին քովս գալ. սոնց խորհուրդով և կարգադրութեամբ նոյն օրը հօն գիշերեցի:

«Մեր ժամանելուն լուրն առած էր Եթովպիոյ Վեհ. Կայսրը, և հրամայած էր իր սկերչապետին՝ պ. Յակոբ Պաղտասարեանին, որ իր նորակառոյց փառաւոր տունը դրուի մեր տրամադրութեան ներքե, իսկ զարդերը, կահն ու կարասին կայսերական Պալատէն հոգացուին. նաև ն. Վեհափառութեան կողմէ ականաւոր անձնաւորութիւն մ'ալ կ'կարգուի մեզ դիմաւորելու համար: Երկուշաբթիի բարի ազօթարանը կ'ըացուէր գեղեցկօրէն, արշալոյսը դիցուհիի դիւթիչ գեղեցկութեամբը կ'փայլէր ազօթարանի դենիթիւն վրայ. արդէն ելած էի վրանէն դուրս, և ընտութեան այդ գեղեցկութիւնը, օդին թարմութիւնը, հովին զովութիւնը կ'ըմբռնէի հաւշտ ու կուռ: Եւ անձ, շատ շան-